

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 49/5

24 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց Սլավիկ Համբարձումյանի 27.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ 30.09.2015թ-ի թիվ 544/03 և ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 20.10.2015թ-ի թիվ 303201/03 որոշումների դեմ:

#### **Սլավիկ Համբարձումյանի գանգատում բերված փաստարկները.**

Սլավիկ Համբարձումյանը հայտնում է, որ ստացել է 30.09.2015 թ-ի թիվ 544/03 որոշումը, որի հիման վրա կայացվել է 20.10.2015 թ-ի թիվ 303201/03 որոշումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Սլավիկ Համբարձումյանը 2006 թ-ի հոկտեմբերի 29-ից լուծարվել է, ուստի գանգատաբերը խնդրում է վերանայել նշված որոշումներով առաջադրված տույժերն ու տուգանքները:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ-ն, քննարկելով Ա/Ձ Սլավիկ Համբարձումյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 29.09.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 371.610 դրամ, որն ամբողջությամբ սուցիալական ապահովության վճարի գծով է:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 30.09.2015 թ-ին ընդունվել է թիվ 544/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Սլավիկ Համբարձումյանից 371.610 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 20.10.2015թ-ին կայացվել է թիվ 303201/03 որոշումը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածի հիմքով Ա/Ձ Սլավիկ Համբարձումյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրությամբ պարզվեց, որ Ա/Ձ Սլավիկ Համբարձումյանը գործունեությունը դադարեցրել (լուծարվել) է 2006 թ-ին: Մասնավորապես, ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալության պետի 22.10.2015 թ-ի թիվ 3-2/2074-15 գրության համաձայն Ա/Ձ Սլավիկ Համբարձումյանի հաշվառումից հանելու (լուծարման) վերաբերյալ գրառումը կատարվել է 29.10.2006 թ-ին: Ընդ որում, Ա/Ձ Սլավիկ Համբարձումյանի ՀՎՀՀ-ն հանդիսացել է թիվ 78606575-ը, այլ ոչ թե Որոշման մեջ նշված՝ թիվ 27819156-ը: Իրականում թիվ 27819156 ՀՎՀՀ-ն պատկանում է Ա/Ձ Դավիթ Գալստյանին, հետևապես նաև Որոշման մեջ

